

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ  
ՈՐՈՇ ՉԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐ 1993—1997 ԹԹ. ՄԻՋԵՎ ԸՆԿԱՍ  
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Խ. Վ. ԿԱՋԱՋՅԱՆ

Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի՝ անկախ հանրապետություն հաստատվելուց հետո աստիճանաբար անկախանում էր նաև ֆինանսաբանկային ոլորտը: Ազգային արժույթի ներմուծումը օրակարգի հարց էր, իսկ միութենական ռուբլու արժեզրկումն ահագնացող շահերի էր հասել: Տնտեսական շրջափակման պայմաններում արտադրության անկումը խիստ զգալի էր, իսկ ներմուծման ու արտահանման կապերը գրեթե չէին գործում: Էլեկտրաէներգիայի, հումքի դիֆիցիտի, ինչպես նաև պատերազմի պատճառով արտադրությունն ամբողջովին կազմալուծված էր: Բանկային համակարգի անորոշ կարգավիճակի հարցը ևս տնտեսական անկայունության պատճառներից էր:

1993 թ. նոյեմբերի վերջին ՀՀ ԿԲ առաջին անգամ շրջանառության մեջ դրեց ազգային արժույթը՝ դրամը: Սակայն, պետք է նշել, որ ներմուծման պահից սկսած հնարավոր շեղավ վերահսկելի դրամի արժեզրկումը Գեո մեկ ամիս շանցած, դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց մի քանի անգամ: Արժեզրկումը շարունակվում էր, իսկ ԿԲ-ը ի վիճակի չէր այն վերահսկել: Սկզբնական շրջանում ԿԲ-ը չունեի հստակ ձևավորված դրամավարկային քաղաքականություն, իսկ փոխարժեքը ձևավորվում էր օսև շուկայի» թելադրանքով: Հիմնական պատճառը դրամավարկային քաղաքականության գործիքների և անհրաժեշտ պահուստների բացակայությունն էր:

Գեո նոր-նոր առաջին քայլերն էին կատարվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների անդամագրվելու ուղղությամբ, այդ թվում՝ Միջազգային Արժույթային Հիմնադրամին և Համաշխարհային բանկին: Այս կազմակերպություններից ստացվող օգնություններն ու միջոցները միշտ էլ պայմանավորված են եղել քաղաքական կայունությամբ և տնտեսական ուժեղացման իրականացմամբ: Օրենսդրական դաշտի բացակայության պայմաններում ֆինանսական ոլորտը գործում էր տարերայնորեն: Այս միտումը փոքր ինչ ուղղվեց 1994 թ.: Ստեղծվեց ամենակարևորը՝ բանկային օրենսդրությունը, որը դարձավ բանկային համակարգի իրավական բազան: Ընդունվեցին «ՀՀ ԿԲ մասին» և «Բանկերի ու բանկային գործունեության մասին» օրենքները:

ՀՀ բանկային համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Ինչ խոսք, բանկային օրենսդրության ընդունումը բանկային համակարգի նորմալ գործունեության երաշխիքն է, նրա իրավական բազան: Պետք է նշել, որ շնայած բանկային օրենսդրությամբ սահմանված բանկային գործառնությունների ցանկը բավականին լայն էր, սակայն բանկերը բավարարվում էին դրանցից միայն մի քանիսի իրականացմամբ: Բանկերի կողմից իրականացվող գործառնությունների ցանկը խիստ սահմանափակ էր: Ավաճեցին ընդունումից, վարկերի տրամադրումից ու արտարժույթի առուվաճառից բացի, այլ գործառնություններ գրեթե չէին կատարվում: Միջազգային հաշվարկների կիրառման արդյունավետության աստիճանը ևս մեծ չէր: Զկային տեխնիկայես հագեցված ժամանակակից համակարգային ցանցեր, որ կապվեին աշխարհի խոշոր ֆինանսական կենտրոնների ու առաջատար բանկերի հետ, և կթե նույնիսկ կապված էին, ապա աշխատանքների օպերատիվությունը չէր ապահովվում: Արդյո՞ք ունենք միջազգային ֆինանսական շուկաներում կատարվող փոփոխությունների արագ ու ներդաշնակ արձագանքող համակարգ: Սրանք հարցեր էին, որոնք շուտափույթ լուծում էին պահանջում: Այս համակարգը, որպես երկաստիճան համակարգ (կենտրոնական բանկ և առևտրային բանկ), դեռ լիովին հստակեցված չէին: Ավելի շատ գործում էր օնուղղակի կարգավորման մեթոդը: Հայաստանի այժմյան, որպես առանձին ինքնուրույն բանկային համակարգի վրա, բավականին խորը ազդեցություն է թողել 70-ամյա տոտալիտար ուժից, երբ մեր բանկային համակարգը հանդես էր գալիս միասնական միութենական բանկային համակարգի կազմում: Այս բոլորի արդյունքում բանկային

մենեջմենտը, ինքնուրույն կադրային քաղաքականությունը թերզարգացում էին ապրել:

Ցավով պետք է նշել, որ գործող առևտրային բանկերի մեծամասնությունը վեր էր անվել խոշորամասշտաբ փոխանակման կետերի՝ իրականացնելով արտարժույթի խիստ սահմանափակ առուվաճառը:

Փոխանակման կետերի գերակշռող մասը շահույթները առավելագույնի հասցնելու նպատակով խախտում էր ԿԲ-ի կողմից սահմանված մարժանները: Ընդհանրապես, ցանկացած երկրի բանկային համակարգի աշխատանքի արդյունավետությունը բխում է այդ համակարգի մեջ մտնող առանձին բանկերի ֆինանսական հզորությունից և կատարվող աշխատանքների արդյունավետությունից և օպերատիվությունից: Օրինակ՝ «ԱՄՆ-ի ֆինանսական համակարգի մեջ մեծ դեր են խաղում մոտ 15000 առևտրային բանկեր, ընդ որում 2/3 մասնավոր, որոնցից յուրաքանչյուրը վարում է ուրույն քաղաքականություն՝ մասուցելով բարձրորակ բանկային ծառայություններ»:

Վերջին տարիներին Հայաստանում մեկը մյուսի հետևից բացվում էին բազմաթիվ առևտրային բանկեր: Միջբանկային մրցակցության տանող այս միտումը, իրենից բխող բոլոր հետևանքներով, խիստ ողջունելի էր: Սակայն, նկատվում էր մի տարօրինակ միտում, երբ անվավեր էին ճանաչվում մի շարք առևտրային բանկերի արտոնագրեր: Հիմնական պատճառները երկուսն էին. ա) հայտարարված կանոնադրական կապիտալի շհամալրելը և սահմանված նորմատիվների խախտումը, բ) երկրորդ պատճառը կապված էր մի վտանգավոր միտումի հետ, երբ ֆինանսավարկային հաստատությունների մի խումբ, զուտ շահագիտական նպատակներով, պարզապես խաբում էր հազարավոր ավանդատուներին: Այս միտումի զեմ մղվող պայքարը ուժեղացման կարիք է զգում նաև ներկայումս:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում նկատվող ամենակարևոր գծերից մեկը ազգային դրամի կայունացմանն ուղղված կենտրոնական բանկի վարած քաղաքականությունն էր, թեկուզև կոշտ, բայց արդյունավետ: Եթե փորձենք զուգահեռականներ անցկացնել հայկական դրամի, ռուսական ռուբլու կամ դեռևս մի քանի տարի առաջ գործող վրացական կուպոնի միջև, ապա միանգամայն ակնհայտ է, որ դրամի փոխարժեքը ամենակայունն էր: Իրոք, սա վկայում է մեր հանրապետության ԿԲ-ի կողմից վարվող դրամի կայունացմանն ուղղված արդյունավետ քաղաքականության մասին:

Վերոհիշյալն առավել հստակ էր արտացոլվում 1994 թ. Երևանի ՖՌ-ում կայացող միջբանկային տարադրամային աճուրդներում: Սրանց մասնակցող բանկերը, ունեին բրոկերային տեղեր. գնել էին ՇՖՌ որոշակի քանակությամբ բաժնետոմսեր: Առաջարկի և պահանջարկի արդյունքում ձևավորված փոխարժեքը երբեմն կտրուկ տատանվում էր:

Ցավոք, պետք է նշել, որ այսուհի հիմնական վաճառողի դերում հանդես էր գալիս Կենտրոնական բանկը, իսկ գնորդի դերում՝ առևտրային բանկերը: Վերջիններս արտարժույթը ձեռք էին բերում սեփական միջոցներ—տարադրամային դիրք—նորմատիվ հարաբերությունները կարգավորելու, ինչպես նաև իրենց հաճախորդների պատվերները կատարելու համար: Սրբ փոխարժեքը բարձրանում էր, ապա ԿԲ-ը լրացուցիչ լոտեր էր հանում վաճառքի՝ նպատակ ունենալով իջեցնել փոխարժեքը: Փաստորեն, լինելով որպես մոնոպոլ վաճառող, ԿԲ-ը կարգավորման և վերահսկման մեծ լծակներ ուներ: Բնականաբար աճուրդի մասնակիցները պարտավոր էին տոկոսներ մուծել (կատարված բորսայական գործարքի դիմաց) բորսային: Գործառնությունների արդյունքում ձևավորվում էր միջին բորսայական կուրս, որը հետագայում հիմք էր ծառայում ԿԲ-ի կողմից հաշվարկային փոխարժեքը որոշելիս:

Չէր կարելի չնկատել նաև այն բացասական փաստը, երբ արժեքային տարբերություն էր գրվում միևնույն արտարժույթի մեծ ու փոքր, հին ու նոր թղթադրամների միջև:

Խոսելով մեր բանկային համակարգի ներկա վիճակի մասին՝ շեք կարող կանգ շառնել մի շատ կարևոր հանգամանքի վրա, այն է՝ տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը և դրանց ետ վերագարձման հետ կապված աշխատանքների արդյունավետությունը: Բանն այն է, որ փոխառությունների տրամադրման տեսանկյունից որոշումների ընդունման մեխանիզմը հնթարկվում է մի շարք գործոնների ազդեցությանը՝ զուտ ֆինանսական ու բանկային, ինչպես նաև անուղղակի (շկարգավորվող) սուբյեկտիվ գործոններ: «Այս անուղղակի միջամտության և ազդեցության արդյունքում բանկի ֆինանսական ռեսուրսները տեղաբաշխվում են անարդյունավետ ձևով, ինչը էպպես ազդում է բանկի աշխատանքի օպերատիվության և որակի վրա»:

Ներդումները Հայաստանում: Հայաստանի տնտեսության ներկա և ապագա վիճակը, տրնտեսագետների համընդհանուր կարծիքով, հիմնականում կապված է լինելու Հայաստանի տրնտեսության մեջ ներդրումների կատարելու հետ: Ինչպես տեսնում ենք, լայն տարածում չեն գտել

1 Э. Роде, «Банки, биржи, валюты современного капитализма», Москва, 1986, с. 56.

2 Your Bank and International Trade, Hire Essential Services, Geosfrye, Chemical Bank, N 9, p. 12.

պորտֆելային ներդրումները, շնայած նման ձևեր էապես կփոքրացնեն ինվեստիցիոն ռիսկը Հաստատանում: Սա բացատրվում է հիմնականում Հայաստանի ֆոնդային շուկայի թերզարգացմամբ: Մեզ մոտ խիստ դժվար է նորմալ ինվեստիցիոն իրավիճակի ստեղծումը, ինչը մեծ զբժվարությունների է հանդիպում հանրապետությունում տնտեսության շուկայական մեթոդներով կազմակերպման ցածր մակարդակի պատճառով: Այս հարցերի լուծումը էապես կախված է կառավարությունից, որը համապատասխան ծրագրերի և նախագծերի առկայության, ինչպես նաև ճկուն քաղաքականություն կարելու միջոցով, հնարավորություն ունի ներգրավել տարբեր ներդրողների խոշոր միջոցներ:

ՀՀ ձեռք է բերել միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտի կարգավիճակ և ներկայումս մի շարք միջազգային ֆինանսական ինստիտուտների անդամ է, այդ թվում՝ Միջազգային Արժույթային Հիմնադրամի և Համաշխարհային Բանկի: Ինչ խոսք, անհշտն արժույթային պաշարներ ունեցող հանրապետության համար այս կ.զմակերպություններից ստացվող միջոցները զգալի գեր կարող են խաղալ տնտեսությունը նորմալ հունի մեջ զցելու համար: Սակայն, ինչպես ամեն մի պարտք, այս միջոցները ևս պետք է վերադարձվեն, իսկ տնտեսության ներկա վիճակը հիմքեր չի տալիս ենթադրելու, որ վերջգծով վարկերը ժամանակին կմարվեն:

Խոսելով ՀՀ արտաքին առևտրի, առկա խնդիրների և նրանց լուծման ուղիների մասին, պետք է նշել, որ Հայաստանի թե՛ արտաքին առևտուրը և թե՛ բանկային համակարգը, որպես ինքնուրույն տնտեսական միավորներ, զտնվում են զարգացման հերթական փուլում:

Արտաքին առևտրի կազմակերպման բնագավառում կան մի շարք զժվարություններ: Այս ոլորտում գործող հայ գործարարներին ղգացնել է տալիս փորձի պակասը, անհրաժեշտ տեխնիկայի ու սարքավորումների և օպերատիվ կապի բացակայությունը, թերի գիտելիքները միջազգային օրենքների և ակտերի մասին, տերիտորիալ հաղորդակցության ոչ բարենպաստ մթնոլորտը: Նկատելի բացթողումներից է նաև այս բնագավառին քաղատնտեսական որակյալ կադրերի պակասը:

Սակայն, ինչպես ցույց են տալիս ներկայիս վերլուծությունները, իրավիճակը աստիճանաբար շտկվում է, քանզի այդ են պահանջում գործարարների և ողջ հանրապետության շահերը: Արտաքին առևտրի աճող ծավալները խոսում են պետության ակտիվ տնտեսական կյանքով ապրելու մասին, ինչը արտահայտվում է նաև նրա վճարային հաշվեկշռի մեջ (շնայած վերջինս ուղղակիորեն կախված չէ արտաքին առևտրից):

Արտաքին առևտրի ծավալների մեծացման համար անհրաժեշտ է ունենալ կայուն տնտեսական համակարգ, կայուն ազգային արժույթ, տնտեսական կապերի լիբերալիզացված համակարգ, ճկուն մաթսային քաղաքականություն, օտարերկրյա կապիտալի ներգրավման անհրաժեշտ խթաններ, առողջ բանկային համակարգ:

Արտաքին առևտրի ազատ զարգացմանը խոչընդոտում է նաև մի շարք ստվերային կառույցների գործունեությունը, որոնց առկայությունը ստեղծում է լրացուցիչ զժվարություններ այս կամ այն ապրանքը արտահանելիս կամ ներմուծելիս (մաքսային քաջշուկաներ և այլն):

Արտաքին առևտուրը ներկա փուլում կրում է հիմնականում ներմուծման բնույթ: Սա բըխում է հանրապետության ընդհանուր տնտեսական վիճակից, ռեսուրսների կառուցվածքից: Քիմիկատների ու հաստոցների արտահանման ոչ մեծ ծավալները ուղեկցվում են վտանկանյութի, անդամներին ներմուծման ահռելի շափերով: Գնալով փոքրանում է ոչ ռեզիլիանտների (օրինակ՝ Իրանի Իսլամական հանրապետության քաղաքացիների) առևտրային գործունեության մաջտաքներն ու ազդեցությունը մեր հանրապետությունում, ինչը բացատրվում է նաև մեր գործարարների տնտեսական գործունեության ակտիվացմամբ: Այս բոլորի արդյունքում ընդլայնվում է նրանց մասնագիտական գիտելիքների բազան, որը նոր երանգ է որակ է ստանում: Արդեն Հայաստանում, ի շնորհիվ ճկուն արտաքին տնտեսական քաղաքականության, մի շարք հայրենական ֆիրմաներ դարձել են խոշոր տնտեսական կառույցներ (հատկապես սննդի և վառելիքի բնագավառներում): Ինչ խոսք, սա խիստ ողջունելի է:

Սակայն հարկադրված ենք նորից անդրադառնալ վերոհիշյալ հիմնահարցին: Խոսքը վերաբերում է ստվերային տնտեսությանը, որն արհեստական արգելքներ է ստեղծում մանր ու միջին այն ֆիրմաների համար, որոնք արտաքին տնտեսական գործունեությամբ են զբաղվում (օրինակ՝ բենզինի առևտուրը):

Այս զժվարությունների արդյունքում էլ աճելի է խորանում մանր, միջին և խոշոր ֆիրմաների տարանջատումը:

Սակայն ցավալիս այն է, որ սրանով ստվերային տնտեսության հսկայական ծավալը մեր հանրապետությունում հարվածում է նախ և առաջ պետական բյուջեի եկամտային հատվածին, իսկ սրանով պայմանավորված՝ հարկային քաղաքականության կոշտացումը ուղղակիորեն ճընշում է օրինական արտաքին-տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին և ֆիրմաներին:

Խոսելով արտաքին առևտրի արագ և արդյունավետ իրականացման ու սպասարկման մասին, շնք կարող շրջանցել տարբեր արժույթների փոխարկման զժվարությունը: Խոսքը վերաբերում է հիմնականում զարգացող երկրների արժույթներին (հունական դրահմա, եգիպտական

Ֆունտ, և այլն): Այսօրվա դրությամբ դրանք կանխիկի (անկանխիկի) ձևով չեն շրջանառում բանկերում, ինչը դժվարություններ է առաջացնում կողմերի համար այդ արժույթներով գործարքներ կնքելիս:

Խոսելով արժույթի մասին՝ պետք է նշել մի բացասական փաստ էս. 1993—94 թթ. ընկած ժամանակահատվածում ազդային արժույթի անկախությունը հետևանքով խախտվում էր մեր տնտեսության նկատմամբ ունեցած վստահությունը: Երբ որ դժվար է, եթե ոչ անհնարին, մեծածավալ գործարքներ կատարել մի արժույթով, որը արժեզրկվում էր: Արտաքին առևտրի աշխուժացմանը իր նպաստը կարող է բերել նաև սահմանների շրջափակման վերացումը: Եթե խոսում ենք տրանզիտային առևտրի մասին, ապա ուժեղ բանկային համակարգից զատ, պետք է առկա լինի բեռնափոխադրումների անվտանգ ու արագ կազմակերպված համակարգ, միջազգային ստանդարտներին համապատասխան նյութատեխնիկական բազա, որակյալ կադրեր և, իհարկե, քաղաքական կայունություն: Հայաստանում տրանսպորտային առաքումներով զբաղվող կազմակերպություններ շատ քիչ կան: Ցավոք, Հայաստանում բեռների արագ ու ապահով տեղափոխման տեսանկյունից շատ թույլ է ապահովագրական շուկան, ինչը, պետք է խոստովանել, էական բացթողում է:

Ինչպես գիտենք, արտաքին առևտուրը արտահայտվում է հիմնականում 3 ձևով՝ արտահանում, ներմուծում, տրանզիտային: Այս վերջին ձևը Հայաստանի հետագա զարգացման համար վճարող նշանակություն կարող է ունենալ հատկապես նրա աշխարհագրական դիրքի տեսանկյունից:

Տրանզիտային առևտրի հաջող կազմակերպումն ու իրականացումը ուղղակիորեն կմեծացնի պետական բյուջեի եկամտային հատվածը՝ հարկային և մաքսային լծակների անմիջական կիրառման արդյունքում:

Անհրաժեշտ է արտաքին-տնտեսական գործունեությամբ զբաղվող ֆիրմաների համար ըստեղծել գործունեության արտոնյալ պայմաններ, մասնավորապես ավելացված արժեքի հարկի և արքիզային հարկի կրճատում, հարկման անհատական մոտեցում: Սա կմեծացնի արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվողների թիվը, կխթանի առողջ մրցակցությունը, որի արդյունքում կշահեն և՛ գործարարները, և՛ պետությունը ընդհանրապես: Այնպես որ, արտաքին առևտրի ոլորտում փոփոխությունների անցկացումը խիստ հրատապ է:

**Х. В. КАЗАЗЯН—Некоторые проблемы банковской системы и внешней торговли Армении в период с 1993 по 1997 гг.**—В статье рассматриваются некоторые проблемы, связанные с развитием банковской системы и внешней торговли Армении в период с 1993 по 1997 гг.

Советский режим оказал глубокое влияние на развитие Армении как самостоятельного и независимого государства: страна была лишена права проводить самостоятельную внешнеэкономическую и финансовую политику. Были очевидны ограниченность банковских операций, недоразвитость банковского управления и самостоятельность кадровой политики. Вышеназванными проблемам обусловлено наличие ряда трудностей и в организации и развитии внешней торговли. Эти трудности и задачи можно разбить на следующие группы: недостаток необходимого опыта в области внешнеторговых операций; неудовлетворительный уровень необходимой техники и оборудования, а также существующей оперативной связи; недостаточный уровень знаний в области международного права и актов; неблагоприятная ситуация с путями сообщения; недостаток высококвалифицированных специалистов в данной области.